ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2015թ. օգոստոսի 20 թիվ 90 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԵՆԻ ԵՎ ԱՐԱԳԱԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի N 895-Ա որոշման պահանջները՝ ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Դավայանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տասնօրյա ժամկետում իրականացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արտենի և Արագածավան գյուղական համայնքների համար կառուցված, շահագործման համար ոչ պիտանի, Թաթուլ և Արևուտ գյուղական համայնքների վարչական սահմաններում գտնվող՝ 6,9 կիլոմետր երկարությամբ, 219 միլիմետր տրամագծով, 6 միլիմետր պատի հաստությամբ, 20,400.0 հազ. դրամ գնահատված արժեքով՝ պետական սեփականություն հանդիսացող գազատարի խողովակաշարից (այսուհետ՝ գույք) 4,4 կիլոմետր հատվածը Արագածավան, իսկ 2.5 կիլոմետր հատվածը՝ Արտենի գյուղական համայնքների ղեկավարների հետ գույքի նվիրաբերության պայմանագրերի կնքման և գույքի հանձնման աշխատանքները:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ԱԲԳԱՐՅԱՆ